ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

N 47

«07» Ապրիլի 2003 թ.

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ - ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաստատել Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության կանոնադրությունը /կցվում է/:

ՄԱՐԶՊԵՏ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

Հաստատում եմ
ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
Վ. Հակոբյան
[illegible] 2009թ
[illegible] 47 որոշում

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺՆԻ-ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինարարության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչությունը /այսուհետև՝ բաժին/ հանդիսանում է մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում, որն իր գործունեությամբ ենթարկվում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին:

2. Բաժինը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ հողային օրենսգրքով, մարզպետի կարգադրություններով, որոշումներով, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի հրամաններով, մարզպետարանի և սույն կանոնադրություններով:

Իր իրավասության սահմաններում կոչված է իրականացնելու մարզի հողային ֆոնդի նպատակային օգտագործմանը վերաբերող ՀՀ օրենքների, ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության իրավական ակտերի պահանջների կատարումը:

Բաժինը իր վերահսկողական գործունեությունն իրականացնում է բաժնի մասնագետների-հողային պետական տեսուչների միջոցով:

### 2. ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

Բաժինը մարզպետին վերապահված լիազորությունների շրջանակներում մասնակցում է հողային քաղաքականության, հողային ռեսուրսների կառավարման, հողօգտագործման արդյունավետության բարձրացման սկզբունքների մշակմանը, հողային հարաբերությունների կարգավորմանը.

2.1 Իր իրավասության սահմաններում մասնակցում է հողերի օգտագործման /գոտիավորման/ սխեմաների, քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի /բնակավայրերի գլխավոր հատակագծեր, մանրամասն հատակագծման նախագծեր/ կազմման աշխատանքներին:

2.2. Իր իրավասության սահմաններում մասնակցում է հողօգտագործման արդյունավետությանն ուղղված նպատակային ծրագրերի կազմման, հողերի միավորման, բաժանման նախագծերի մշակման աշխատանքներին:

2.3. Իր իրավասության սահմաններում մասնակցում է պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի մասնավորեցման և հետագա օգտագործման ուղղությունների, հողերի պահպանության, միավորման և վերաբաշխման նպատակային ծրագրերի մշակմանը:

2.4. Իր իրավասության սահմաններում մասնակցում է խախտված հողերի ռեկուլտիվացիայի հողաշերտերը ջրային և հողմային հողատարածությունից, փլուզումներից և սողանքներից, ճահճացումից, չորացումից, աղակալումից, արտադրված թափոններից, ռադիոակտիվ և քիմիական աղտոտումից պաշտպանելու, գյուղատնտեսական հողերը բարելավելու, նոր հողեր յուրացնելու,

հողը պահպանելու և դրա բերրիությունը բարձրացնելու նպատակային ծրագրերի մշակմանը:

2.5. Մասնակցում և օժանդակում է հողաշինարարության գծով քարտեզագրական, հողային, ագրոքիմիական, երկրաբուսաբանական և այլ հետազոտական աշխատանքների իրականացմանը:

2.6. Իր իրավասության սահմաններում մասնակցում է չօգտագործվող, անարդյունավետ կամ իրենց նպատակային նշանակությանն անհամապատասխան օգտագործվող հողերի գույքագրման և հաշվառման աշխատանքներին:

2.7. Մասնակցում է հողօգտագործմանը վերաբերվող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի /հրահանգներ, մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ/ մշակմանը ու ներդրմանը:

2.8. Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի և մարզպետի հանձնարարականների համաձայն իրականացնում է այլ գործառույթներ:

2.9. Վերահսկողություն է իրականացնում՝

ա/ մարզի հողային ֆոնդի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

բ/ Պետական և համայնքային սեփականության հողերի պահպանության, տրամադրման, հետ վերցնելու, օգտագործվող հողամասերի վարձավճարների և հարկերի գանձման միջոցառումների նկատմամբ:

գ/ Տեղական ինքնակառավարման մարմինների հողային հարաբերությունների բնագավառում իրականացվող գործունեության նկատմամբ:

դ/ Մարզի սահմանանիշերի պահպանման նկատմամբ:

2.10. Օրենքով սահմանված դեպքերում ու կարգով պարտադիր կատարման ցուցումներ է տալիս և նշանակում վարչական տույժեր: Հաղորդումներ է ներկայացնում իրավասու մարմիններին՝ հողային օրենսդրության պահանջները խախտողներին օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ: Կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում

## 3. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է մարզպետարանի և բաժնի աշխատանքային ծրագրերին համապատասխան:

3.2. Բաժնի աշխատանքային ծրագրերը կազմվում են յուրաքանչյուր տարվա և եռամսյակների համար:

3.3. Բաժինը սահմանված կարգով մասնակցում է իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ նախագծերի մշակմանն ու քննարկմանը:

3.4. Առաջարկություններով հանդես է գալիս իր գործունեությունը կարգավորող իրավական ակտերի, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի /հրահանգներ, մեթոդական ցուցումներ, հանձնարարականներ և այլն/ նախագծերի վերաբերյալ:

3.5 Սահմանված կարգով մասնակցում է բաժնի իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց ու կազմակերպությունների հետ մարզպետի կողմից կնքվող պայմանագրերի նախագծերի մշակմանն ու քննարկմանը.

3.6. Մարզպետարանի աշխատակազմի վարչությունների ու մյուս բաժինների հետ համատեղ մասնակցում է ներմարզային խնդիրների մշակման և լուծման աշխատանքներին:

3.7. Բաժինն ապահովում է հողօգտագործման և հողաշինարարության աշխատանքների արդյունքում ստացվող փաստաթղթերի հաշվառումը, պահպանումը և շրջանառությունը:

3.8. Բաժնի աշխատակիցները պարտավոր են չհրապարակել, չտարածել պետական, ծառայողական կամ առևտրային գաղտնիք հանդիսացող տվյալներ:

3.9. Բաժինը ղեկավարում է բաժնի վարիչը, որին պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը՝ ՀՀ օրենքով սահմանված կարգով:

3.10. Բաժնի վարիչը՝

ա/ պատասխանատվություն է կրում բաժնի առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար, ապահովում է տեսչական խնդիրների և գործառույթների իրականացումը և կատարում պարտականությունների բաշխում բաժնի աշխատակիցների միջև:

բ/ ապահովում է քաղաքացիների դիմումների, գանգատների, առաջարկությունների քննարկումը:

գ/ ղեկավարում է բաժնի առջև դրված խնդիրների լուծմանն ուղղված կազմակերպական ու վերահսկման աշխատանքները, բաժնում ապահովում է աշխատանքային կարգապահությունը:

դ/Մարզպետին և աշխատակազմի ղեկավարին է ներկայացնում բաժնի աշխատանքային հաջողությունների համար աշխատակիցների խրախուսման և աշխատանքային պարտականությունները անբարեխիղճ կատարողներին պատասխանատվության ենթարկելու առաջարկություններ:

3.11. Բաժնի վարիչի բացակայության դեպքում մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պարտականությունների կատարումը կարող է դրվել հավասարազոր պաշտոն զբաղեցնող անձանցից մեկի վրա:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԵՎ ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ-ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ Է. ՍՏԵՓԱՆՅԱՆ